



Համարը N 690-Ն

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.07.04/34(558)

Հոդ.774

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ

Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.06.2007

Տեսակը Ինկորպորացիա

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 15.02.2007

Ստորագրման ամսաթիվը 18.06.2007

Վավերացման ամսաթիվը 20.06.2007

Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՋՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

20 հունիսի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի 2007 թվականի N 690-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՋՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի ու Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հետ համաձայնեցնելուց հետո հաստատել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կայանների տեխնիկական ղեկավարների և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկիչների պատրաստման ու վերապատրաստման դասընթացների ուսումնական ծրագրերը և ապահովել մասնագետների պատրաստումը՝ սկսած 2007 թվականի հունիս ամսվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հունիսի 25-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ս. Սարգսյան

2007 թ. հունիսի 18
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
փետրվարի 15-ի N 690-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների (այսուհետ՝ տրանսպորտային միջոցներ) տեխնիկական զննության (այսուհետ՝ տեխնիկական զննություն) անցկացման գործունեության լիցենզավորման կարգը, ինչպես նաև կարգավորվում են դրա հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) **տեխնիկական զննություն**՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական արատների և անսարքությունների հայտնաբերման նպատակով իրականացվող պարբերական ստուգման համալիր միջոցառումների գործընթաց, որն ուղղված է տեխնիկական նորմաներով (ստանդարտներով, կանոնակարգերով, այլ իրավական ակտերով) սահմանված պահանջներին համապատասխան՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանը:

2) **տեխնիկական զննության կայան**՝ տեխնիկական արատորոշման սարքերով և սարքավորումներով (այսուհետ՝ տեխնիկական արատորոշման միջոցներ) կահավորված արտադրական նշանակության շենք (այսուհետ՝ արտադրական բազա), որտեղ տրանսպորտային միջոցների տեխնիկական արատների և անսարքությունների հայտնաբերման նպատակով իրականացվում են տեխնիկական վիճակի ստուգման համալիր միջոցառումներ:

3) **հոսքային գիծ (այսուհետ՝ հոսքագիծ)**՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական արատների և անսարքությունների հայտնաբերման նպատակով տեխնիկական արատորոշման միջոցներով կահավորված արտադրական տարածք:

4) **ունիվերսալ հոսքագիծ**՝ հոսքագիծ, որտեղ տարբեր տեսակների և նշանակության տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի ստուգման համալիր միջոցառումներ իրականացնելու ժամանակ առնու վրա ընկնող առավելագույն զանգվածը չի գերազանցում 13000 կիլոգրամը:

5) **թեթև տրանսպորտային միջոցների հոսքագիծ (այսուհետ՝ թեթև հոսքագիծ)**՝ հոսքագիծ, որտեղ տարբեր տեսակների և նշանակության թեթև մարդատար, փոքր և միջին բեռնատար տրանսպորտային միջոցների ու միկրոավտոբուսների տեխնիկական վիճակի ստուգման համալիր միջոցառումներ իրականացնելու ժամանակ առնու վրա ընկնող առավելագույն զանգվածը չի գերազանցում 3500 կիլոգրամը:

3. Տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բարդ ընթացակարգով:

4. Տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին)՝ հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) եզրակացության հիման վրա:

5. Տեխնիկական զննության անցկացման գործունեության համար լիցենզիաները տրվում են անժամկետ:

6. Լիցենզավորված անձինք տեխնիկական զննության անցկացման գործունեությունն իրականացնում են միայն լիցենզիայում նշված գործունեության վայրում:

7. Լիցենզիան չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

8. Տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզիայի հետ տրվում է լիցենզավորող անձի կողմից շահագործվող հոսքագծերի քանակին և տեսակին համապատասխան լիցենզիայի ներդիր (ներդիրներ)՝ համաձայն N 3 ձևի:

II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

ԳՈՐԾՆԵԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Տեխնիկական գննության անցկացման գործունեության լիցենզիա ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ՝ համաձայն N 1 ձևի.

2) տեխնիկական գննության համար նախատեսված արտադրական տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը.

3) տեխնիկական գննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների փորձաքննության դրական եզրակացությունը կամ ապրանքների, առարկաների ու սարքավորումների վերաբերյալ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացությունը.

4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

10. Լիցենզիա ստանալու մասին հայտը և դրան կից փաստաթղթերը լիցենզավորող մարմին են ներկայացվում առձեռն, փոստով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

11. Հանձնաժողովն ուսումնասիրում է հայտատուի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն կարգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին ու եզրակացություն է ներկայացնում լիցենզավորող մարմնի ղեկավարին:

12. Ներկայացված եզրակացության հիման վրա լիցենզավորող մարմնի ղեկավարը որոշում է ընդունում: Լիցենզավորող մարմնի ղեկավարի դրական որոշման հիման վրա հայտատուին է տրամադրվում տեխնիկական գննության անցկացման գործունեության լիցենզիա և շահագործվող հոսքագծերի քանակին ու տեսակին համապատասխան ներդիրներ: Բացասական որոշման դեպքում՝ եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացվում է հայտատուին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը:

13. Տեխնիկական գննության անցկացման գործունեության լիցենզիան ստորագրվում և կնքվում, իսկ լիցենզիայի ներդիրներն ստորագրվում են լիցենզավորող մարմնի լիազորած լիցենզավորող ստորաբաժանման ղեկավարի կողմից:

14. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև, եթե սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթի (փաստաթղթերի) համաձայն հայտատուի արտադրական տարածքի չափերը չեն բավարարում սույն կարգի 15-րդ կետի պահանջներին:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ

15. Տեխնիկական գննության կայանների արտադրական տարածքը, ըստ ներկայացված հոսքագծերի տեսակի, յուրաքանչյուր հոսքագծի հաշվարկով պետք է բավարարի աղյուսակում նշված նվազագույն չափերը:

16. Լիցենզավորված կազմակերպությունը, տրանսպորտային միջոցների տեխնիկական գննության գործունեություն սկսելուց առաջ, միանում է տեխնիկական գննության կայանների ընդհանուր համակարգչային ցանցին:

17. Տեխնիկական գննություն իրականացնող լիցենզավորված անձը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10 օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով լիցենզավորող մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ համաձայն N 4 ձևի:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԿՐԿԼՕՐԻՆԱԿԻ, ՆՈՐ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ՆԵՐԴԻՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼԸ

18. Լիցենզիան վերաձևակերպվում, լիցենզիայի գործողությունը կասեցվում և դադարեցվում, լիցենզիան և լիցենզիայի ներդիրի կրկնօրինակը տրամադրվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

19. Լիցենզավորված անձը տեխնիկական գննության իրականացման վայրում նոր հոսքագիծ է շահագործում միայն ներդիրի առկայության դեպքում:

20. Նոր հոսքագծի ներդիր ստանալու նպատակով հայտատուն առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային տարբերակով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշման համաձայն, լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ՝ համաձայն N 2 ձևի.

2) հոսքագծի վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացությունը կամ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացությունը.

3) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

21. Նոր հոսքագծի ներդիր ստանալու մասին հայտն ստանալու օրվան հաջորդող՝ ոչ ուշ, քան տասն աշխատանքային

օրվա ընթացքում լիցենզավորող հանձնաժողովը լիցենզավորող մարմնի ղեկավարին է ներկայացնում եզրակացություն, որի հիման վրա լիցենզավորող մարմնի ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում: Լիցենզավորող մարմնի դրական որոշման դեպքում հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է ներդիր:

22. Նոր հոսքագծի ներդիր ստանալուց հետո՝ լիցենզիայի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հերթական տարեկան պետական տուրքը ենթակա է վճարման՝ ելնելով լիցենզիայի ներդիրների (հոսքագծերի) քանակից՝ անկախ ներդիրի տրամադրման համար վճարված պետական տուրքի գումարի վճարման ժամկետից: Լիցենզավորող մարմինը լիցենզիայի նոր ներդիրի տրամադրման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

23. Լիցենզավորված անձի՝ նոր հոսքագիծ շահագործելու մասին հայտը մերժվում է, եթե լիցենզավորման մարմին ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի 20-րդ կետի պահանջներին, ինչպես նաև, եթե սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթի (փաստաթղթերի) համաձայն հայտատուի արտադրական տարածքի չափերը չեն բավարարում սույն կարգի 15-րդ կետի պահանջները:

24. Մեկից ավելի հոսքագծերով տեխնիկական գնություն իրականացնող լիցենզավորված անձը գործունեության տվյալ վայրում հոսքագծի շահագործումից հրաժարվելու դեպքում լիցենզավորող մարմին է ներկայացնում դիմում հոսքագծի շահագործումից հրաժարվելու մասին, որին կցվում է հոսքագծի ներդիրը:

25. Լիցենզավորված անձի կողմից գործող հոսքագծի շահագործումից հրաժարվելու մասին դիմումը լիցենզավորող մարմնում մուտքագրվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում մերժվում է, եթե տվյալ հոսքագծի շահագործման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան, պետական տուրքի վճարման պարտավորությունը կատարված չէ և (կամ) կցված չէ հոսքագծի ներդիրը: Լիցենզավորող մարմինը հոսքագծի շահագործումից հրաժարվելու մասին դիմումի բավարարման դեպքում ընդունում է որոշում հոսքագծի ներդիրի գործողության դադարեցման՝ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, որի դեպքում ներդիրի (հոսքագծի) մասով հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունը դադարում է: Լիցենզավորող մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին տեղեկացնում է հայտատուին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

26. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը տրված լիցենզիայում նշված հոսքագծի շահագործումից հրաժարվելու դեպքում լիցենզավորված անձը դիմում է լիցենզավորող մարմին՝ գործող լիցենզիան նոր ձևաթղթով փոխարինելու համար՝ սույն կարգի 28-32-րդ կետերին համապատասխան:

27. Լիցենզիա ստանալու կամ լիցենզիայի վերաձևակերպման մասին կամ լիցենզավորված անձի կողմից նոր հոսքագիծ շահագործելու մասին հայտի կամ լիցենզավորված անձի կողմից գործող հոսքագծի շահագործումից հրաժարվելու մասին դիմումի մերժման և լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման մասին լիցենզավորող մարմնի որոշումները կարող են բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

V. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

28. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը տրված լիցենզիան նոր ձևաթղթով փոխարինելու համար տեխնիկական գնության անցկացման գործունեություն իրականացնող անձը կարող է լիցենզավորող մարմին ներկայացնել նախկինում ստացած լիցենզիայի բնօրինակը և դիմում՝ նշելով առկա հոսքագծերից հետագա շահագործման համար նախատեսվող թվի մասին տեղեկատվությունը:

29. Լիցենզիան նոր ձևաթղթով փոխարինելու դեպքում տրվում են նախկին լիցենզիայի վավերապայմաններին (բացառությամբ սերիայի) համապատասխան նոր նմուշի լիցենզիա և հետագա շահագործման համար հոսքագծերի թվին ու տեսակին համապատասխան ներդիրներ՝ դիմումը և լիցենզիայի բնօրինակը ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում:

30. Լիցենզիան նոր ձևաթղթով փոխարինելը և համապատասխան ներդիրի տրամադրումը մերժվում է, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան պետական տուրքի վճարման պարտավորությունը կատարված չէ:

31. Լիցենզիայի նոր ձևաթղթով փոխարինման դիմաց վճար չի գանձվում:

32. Լիցենզիան նոր ձևաթղթով չփոխարինելը հիմք չէ գործող լիցենզիայի գործողության դադարեցման համար:

Ձև N 1

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու _____

(իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական ռեգիստրում

գրանցման համարը, հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն,

անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

պետական ռեգիստրում հաշվառման համարը, հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն)

Խնդրում եմ տրամադրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա:

Կից ներկայացնում եմ լիցենզիա ստանալու համար պահանջվող փաստաթղթերը՝

1) տեխնիկական զննության կայանի արտադրական տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը.

2) տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների փորձաքննության դրական եզրակացությունը կամ ապրանքների, առարկաների ու սարքավորումների վերաբերյալ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացությունը.

3) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Լիցենզավորող մարմնի ղեկավարի դրական որոշումն ստանալուց հետո պարտավորվում եմ երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքը և դրա մասին տեղեկատվություն ներկայացնել լիցենզավորող մարմին:

Հայտատու _____

(պաշտոնը)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Ձև N 2

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆՈՐ ՆԵՐԴԻՐ (ՆԵՐԴԻՐՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու _____

(իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական ռեգիստրում

գրանցման համարը,

անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական ռեգիստրում հաշվառման համարը,

տեխնիկական զննության գործունեության համար տրամադրված գործող լիցենզիայի համարը)

Խնդրում եմ տրամադրել լիցենզիայի լրացուցիչ ներդիր (ներդիրներ)՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության նոր հոսքագիծ շահագործելու նպատակով:

Կից ներկայացնում եմ լիցենզիայի ներդիր (ներդիրներ) ստանալու համար պահանջվող փաստաթղթերը՝

1) հոսքագծի վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացությունը կամ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացությունը.

2) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Լիցենզավորող մարմնի ղեկավարի դրական որոշումն ստանալուց հետո պարտավորվում եմ երեք աշխատանքային օրվա ընթացքում վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքը և դրա մասին տեղեկատվություն ներկայացնել լիցենզավորող մարմին:

2.	Ճանաչվել են սարքին, որոնցից՝ երկրորդ անգամ ստուգելուց հետո									
3.	Սարքին տրանսպորտային միջոցների թիվն ըստ օգտագործվող վառելիքի՝									
	1) բենզին									
	2) դիզելային վառելիք									
	3) հեղուկացված նավթային գազ									
	Ընդամենը									

Աղյուսակ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ

NN ը/կ	Հոսքագծի տեսակը	Արտադրական տարածքի չափերը
1.	Թեթև տրանսպորտային միջոցների հոսքագիծ	երկարությունը՝ 18 մ լայնությունը՝ 5 մ
2.	Ունիվերսալ հոսքագիծ	երկարությունը՝ 24 մ լայնությունը՝ 6 մ

(հավելվածը լրաց. 11.06.09 N 686-Ն, խմբ., լրաց., փոփ. 26.08.10 N 1134-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, 28.04.11 N 636-Ն, խմբ. 02.08.12 N 1105-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2007 թվականի
փետրվարի 15-ի N 690-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Ն Տ Մ Տ Ջ 00000

Տրվում է _____

(իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ համար՝
անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործունեության տեսակը՝

Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների
տեխնիկական զննության
անցկացում

Գործունեության իրականացման վայրը _____

Լիցենզիայի գործողության ժամկետը _____ Անժամկետ

Լիցենզիան տալու ամսաթիվը _____

Լիցենզիայի գործողության վարչական տարածք _____

Շահագործվող հոսքագծերի թիվը _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ 200 թ.

(հավելվածը լրաց., փոփ. 02.08.12 N 1105-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թոփուզյան